ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--հուլիսի 2023 թվականի №-Ա

«ԿԱՊՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՊՍ ՀԱՄԱՅՆՔԻ 11-ՐԴ ՓՈՂՈՑԻ №10 ՇԵՆՔԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ.

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի ապրիլի 12-ի №Ե-453-23 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով՝ խնդրելով ընդունել անհատական որոշում, որի համաձայն «Կապսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը պատկանող՝ Շիրակի մարզի Կապս համայնքի 11-րդ փողոցի №10 շենքի սպառման համակարգի (այսուհետ՝ Սպառման համակարգ)՝ էլեկտրական ցանցին միացման վճարը վերջինիս փոխարեն կվճարի «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի ապրիլի 27-ի №Ե-544-23, «Կապսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը 2023 թվականի մայիսի 22-ի գրություններով հայտնել են, որ չեն առարկում Սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի №523Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի

բաշխման ցանցային կանոնների 156-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ՝
   1) Սպառման համակարգը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին միացման վճարը «Կապսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության փոխարեն վճարում է «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ վերջիններիս միջև կնքվելիք՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագրի հիման վրա՝ համաձայն հավելվածի.
   2) Սպառման համակարգի՝ էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման պայմանագիրը կնքվում է «Կապսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հայտն առձեռն ներկայացվելու դեպքում՝ անմիջապես, իսկ փոստային կապի միջոցով ներկայացվելու դեպքում՝ հայտն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, «Կապսի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և «ԻՆՏԵՐԵՎՐՈՍ-ԱՐԳՈՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
--հուլիսի 2023թ.